Արձանագրություն N 2

«ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով կայանի կարիքների համար «ՅԱԷԿ» ՓԲԸ 10 Մբիթ/վրկ հիմնական համացանցային կապի ծառայության գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մեծամոր

29 դեկտեմբերի 2015թ.
ժ.11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Արշակյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Անիսոնյանը, Վ. Գալոյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հակոբյանը
«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Ա. Խաչատրյանը

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և «ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը՝

**1. «ՀԱԷԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

----------------------------------------------------------------------

Նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ: Յանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը: Յանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ նշված ծածկագրով ընթացակարգի հրավերը ծանուցվել է aprang-15-1@shh.gnumner.am էլ. փոստով՝ սույն ծածկագրով գրանցված մասնակիցներին:

ա. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| **Մասնակցի անվանումը և հասցեն** |
|---|
| **«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ**<br>**ք.Երևան, Արգիշտի 4/1**<br>**հեռ. 060-77-11-11,**<br>**էլ.փոստ՝ info@mts.am** |
| **880000 (ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ** |

2. Ուսումնասիրելով ներկայացված ծրարը, դրանում գտնվող փաստաթղթերը՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

- «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ -ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

3. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:**

6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը, գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ը, ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք հասցեում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:**

Յանձնաժողովի նախագահ՝ .......................... Վ. Արշակյան

Յանձնաժողովի անդամներ՝ .......................... Է. Անիսոնյան

.......................... Վ. Գալոյան

Քարտուղար՝ .......................... Ա. Հակոբյան